

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

1.Ի՞նչ պահանջումներ ունի մարդը օրգանիզմի և անձի պահպանման ու զարգացման համար.

1. Բնական և արհեստական
2. Մշակութային և տնտեսական
3. Բնական և մշակութային
4. Տնտեսական և արհեստական

2.Ինչպիսի՞ գործունեություն է ծավալում մարդը իր պահանջումները բավարարելու համար.

1. Հետազոտական և ձևափոխման
2. Տեղեկատվական և հաղորդակցման
3. Ստեղծման և շահագործման
4. Արտադրման և սպառման

3.Առողջ մարդու սննդի օրաբաժնում 1:1:4 հարաբերակցությունը ցույց է տալիս՝

1. Ճարպերի, սպիտակուցների և ածխաջրերի հարաբերակցությունը
2. Սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի հարաբերակցությունը
3. Ածխաջրերի, ճարպերի և սպիտակուցների հարաբերակցությունը
4. Սպիտակուցների, ածխաջրերի և ճարպերի հարաբերակցությունը

4. Լավ մարսողության համար տաք կերակրի ջերմաստիճանը պետք է լինի՝

1. 20...30°C
2. 30...40°C
3. 40...45°C
4. 50...60°C

5.Սսամթերք, թռչնամիս և ձուկ եփելիս առնվազն որքա՞ն ջերմաստիճան պետք է լինի դրանց կենտրոնում, որպեսզի ոչնչանան մարդուն վնասող մանրէները.

1. Առնվազն 80°C
2. Առնվազն 90°C
3. Առնվազն 100°C
4. Առնվազն 110°C

6.Ինչի՞ համար են նախատեսված կտորե անձեռոցիկները.

1. Հագուստը կեղտոտվելուց պաշտպանելու համար
2. Բերանն ու ձեռքերը մաքրելու համար
3. Սպասքը մաքրելու համար
4. Գեղեցիկ տեսք ապահովելու համար

7. Մեղանի սպասքաղորման ժամանակ ի՞նչ դիրքով է դրված լինում պատառաքաղը.

1. Դնում են ավսեի աջ կողմում՝ ատամները դեպի վեր
2. Դնում են ավսեի աջ կողմում՝ ատամները դեպի ներքև
3. Դնում են ավսեի ձախ կողմում՝ ատամները դեպի ներքև
5. Դնում են ավսեի ձախ կողմում՝ ատամները դեպի վեր

8. Ինչպե՞ս է կոչվում այն գրաֆիկական պատկերը, որում օբեկտի բաղադրիչ մասերը, դրանց միջև եղած կապերը և փոխադարձ դիրքը պատկերվում են պայմանանշանների օգնությամբ.

1. Էսքիզ
2. Տեխնիկական նկար
3. Սխեմա
4. Տեխնոլոգիական քարտ

9. Ինչի՞ է հավասար $A0$ ձևաչափի մակերեսը.

1. $0,8\text{մ}^2$
2. $1,2\text{մ}^2$
3. $1,5\text{մ}^2$
4. 1մ^2

10. $A1$ ձևաչափը քանի՞ անգամ է մեծ $A3$ ձևաչափից.

1. 3 անգամ
2. 2 անգամ
3. 4 անգամ
4. 6 անգամ

11. Ինչպե՞ս են անվանում սղոցանյութը, որը ստացվում է գերանը երկու փոխուղղահայաց տրամագծերով սղոցման ճանապարհով.

1. Կիսան
2. Խտրակ
3. Չորսվակ
4. Քառորդակ

12.Ի՞նչ հերթականությամբ է իրականացվում տեխնոլոգիական գործընթացը.

1. Նյութի ընտրություն, նախապատրաստվածքի ընտրություն, դետալի գրաֆիկական պատկերում, գործիքների և հարմարանքների ընտրություն, նախապատրաստվածքի չափանշում, անհրաժեշտ մշակումների կատարում, հարդարում և վերջնամշակում
2. Նյութի ընտրություն, դետալի գրաֆիկական պատկերում, գործիքների և հարմարանքների ընտրություն, նախապատրաստվածքի ընտրություն, նախապատրաստվածքի չափանշում, անհրաժեշտ մշակումների կատարում, հարդարում և վերջնամշակում
3. Դետալի գրաֆիկական պատկերում, նյութի ընտրություն, գործիքների և հարմարանքների ընտրություն, նախապատրաստվածքի ընտրություն, նախապատրաստվածքի չափանշում, անհրաժեշտ մշակումների կատարում, հարդարում և վերջնամշակում
4. Դետալի գրաֆիկական պատկերում, նյութի ընտրություն, նախապատրաստվածքի ընտրություն, նախապատրաստվածքի չափանշում, գործիքների և հարմարանքների ընտրություն, անհրաժեշտ մշակումների կատարում, հարդարում և վերջնամշակում:

13.Նշվածներից ո՞րը ռանդայի մաս չէ.

1. Իրան
2. Դանակ
3. Եղջուր
5. Պարանոց

14.Ի՞նչ հեռավորության վրա պետք է լինի մեխը փայտի ճակատամասից.

1. Ոչ պակաս իր տրամագծի քառապատիկից
2. Ոչ պակաս իր տրամագծի հնգապատիկից
3. Ոչ պակաս իր տրամագծի տասնհինգապատիկից
4. Ոչ պակաս իր տրամագծի տասնապատիկից

15.Որքա՞ն պետք է լինի շաղափված անցքի խորությունը մեխման տեղում՝ ամուր փայտանյութից պատրաստված դետալների միացման ժամանակ.

1. Մեխի երկարության կեսից պակաս
2. Մեխի երկարության կեսից ոչ պակաս
3. Միացվող դետալի կեսից պակաս
4. Միացվող դետալի կեսից ոչ պակաս

16.Տամպոնով (լաթագնդով) փայտի վերջնամշակումն իրականացնելիս լաքը քսում են՝

1. Փայտի թելիկների հակառակ ուղղությամբ
2. Փայտի թելիկների ուղղությամբ
3. Փայտի անկյունագծի ուղղությամբ
4. Փայտի լայնական ուղղությամբ

17.Հնարավոր ր է, արդյոք, էսքիզի օգնությամբ ձևել հագուստը.

1. Հնարավոր է
2. Հնարավոր չէ
3. Հնարավոր է մասամբ
4. Հնարավոր է միայն որոշ հագուստի դեպքում

18.Ո՞ր կողմից պետք է ընկնի լույսը աշխատասեղանի վրա՝ ձեռքով կարվածքներ պատրաստելու համար.

1. Դիմացից
2. Աջից
3. Չափից
4. Հետևից

19.Ի՞նչ երկարություն ունի սանտիմետրաժապավենը, որը նախատեսված է մարմնակազմվածքի չափսերը վերցնելու և կարվածքի ճշտությունը ստուգելու համար.

1. 100սմ
2. 150սմ
3. 200սմ
4. 250սմ

20.Ի՞չի՞ համար է նախատեսված բրիկը.

1. Կարվածքի դետալները իրար միացնելու համար
2. Ասեղները և գնդասեղները դասավորելու համար
3. Գործվածքները կտրելու և ձևելու համար
4. Շուրջակարերի հեռացման և ծալքերի ուղղման համար

21. Ո՞ր էներգիան են օգտագործում ՋԷԿ-երում էլեկտրական էներգիա ստանալու համար.

1. Հոսող ջրի էներգիան
2. Ատոմային ռեակցիայի էներգիան
3. Վառելիքի էներգիան
4. Քամու էներգիան

22. Այն բոլոր սարքերն ու հարմարանքները, որոնցում էլեկտրական էներգիան ձևափոխվում է այլ տեսակ էներգիաների կոչվում են՝

1. Հաղորդիչներ
2. Սպառիչներ
3. Տվիչներ
4. Մեկուցիչներ

23. Փափուկ խաղալիքները ըստ նյութի տեսակի լինում են՝

1. Մորթային, լաթային, ատաղձագործական
2. Մորթային, լաթային, կոմբինացված
3. Կոմբինացված, ատաղձագործական, լաթային
4. Կոմբինացված, մորթային, ատաղձագործական

24. Ինչի՞ համար են գինու բաժակը բռնում պոչից.

1. Որպեսզի բաժակի մեջ երևա գինին
2. Որպեսզի գեղեցիկ լինի
3. Որպեսզի բաժակին հավելիս գինին չտաքանա
4. Որպեսզի բաժակները իրար խփելիս չխանգարի

25. Որքա՞ն է սննդի օրաբաժնի կալորիականությունը 5-8 տարեկան երեխաների համար.

1. 1500....1800 կկալ
2. 2000....2400 կկալ
3. 2500....2800 կկալ
4. 2800....3000 կկալ

26. Սպասքաղրման ժամանակ ի՞նչ դիրքով են դնում դանակը.

1. Ափսեի ձախ կողմում՝ կտրող եզրը դեպի ափսեն
2. Ափսեի ձախ կողմում՝ կտրող եզրը ափսեին հակառակ
3. Ափսեի աջ կողմում՝ կտրող եզրը դեպի ափսեն
4. Ափսեի աջ կողմում՝ կտրող եզրը ափսեին հակառակ

27. Մասաթերքների տեսակների ո՞ր հաջորդականությունն է ճիշտ ըստ եփման համար անհրաժեշտ ջերմաստիճանի՝ 50°-60°-80°.

1. Թռչնամիս, ձուկ, կարմիր միս
2. Ձուկ, կարմիր միս, թռչնամիս
3. Թռչնամիս, կարմիր միս, ձուկ
5. Ձուկ, թռչնամիս, կարմիր միս

28. Մարմնակազմվածքի ո՞ր չափսերն են վերցնում և գրանցում ամբողջությամբ.

1. Կոնքի շրջագիծ
2. Պարանոցի շրջագիծ
3. Լայնական
4. Երկայնական

29. Ո՞ր կողմից են վերցնում մարմնակազմվածքի չափսերը.

1. Մարդու մարմնի ձախ կողմից
2. Մարդու մարմնի աջ կողմից
3. Մարդու մարմնի ներքևի կողմից
4. Մարդու մարմնի վերևի կողմից

30. Մարմնակազմվածքի ո՞ր չափսն են վերցնում սկզբում.

1. Երկարության
2. Մեջքի երկարության
3. Լայնության
4. Բարձրության

31. Նշվածներից ո՞րն է ժամանակավոր կարատեսակ.

1. Օղակար
2. Հետկար
3. Շուկալակար
4. Թակալակար

32. Նշվածներից ո՞րն է թափանցիկ գունանյութ.

1. Գուաշ
2. Ջրաներկ
3. Յուղաներկ
4. Յուղամատիտ

33. Նշվածներից ո՞րն է գործվածքի ֆիզիկամեխանիկական հատկություն.

1. Դիմացկունություն
2. Օդաթափանցելիություն
3. Կծկվողություն
4. Մաշակայունություն

34.Ի՞նչ լարում պետք է ունենա գողիչը, որպեսզի օգտագործվի ուսումնական արհեստանոցներում.

1. 38Վ-ից ոչ քարձր
2. 36 Վ-ից ոչ քարձր
3. 40 Վ-ից ոչ քարձր
4. 120 Վ-ից ոչ քարձր

35.Դետալների այն միասնությունը, որտեղ մի դետալի շարժումն առաջացնում է այդ համակարգի մյուս դետալների որոշակի տեղաշարժ կոչվում է՝

1. Մեքենա
2. Մեխանիզմ
3. Աշխատանք
4. Տեղափոխում

36.Ի՞նչ տեսք և դիրք ունի գլանի պրոֆիլային պրոյեկցիան էպյուրում, եթե նրա ֆրոնտալային պրոյեկցիան շրջանագիծ է.

1. Պրոֆիլային պրոյեկցիան կլինի ուղղանկյուն, որի երկար կողը զուգահեռ կլինի Z առանցքին
2. Պրոֆիլային պրոյեկցիան կլինի ուղղանկյուն, որի փոքր կողը զուգահեռ կլինի Z առանցքին
3. Պրոֆիլային պրոյեկցիան կլինի շեղանկյուն, որի երկար կողը զուգահեռ կլինի Z առանցքին
4. Պրոֆիլային պրոյեկցիան կլինի շեղանկյուն, որի փոքր կողը զուգահեռ կլինի Z առանցքին

37.Խորանարդի և զուգահեռանիստի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար գծագրի վրա քանի՞ գծային չափ են նշում.

1. Երկու չափ
2. Երեք չափ
3. Չորս չափ
4. Հինգ չափ

38.Տեխնիկական նկարի սովերապատում կատարելիս ընդունված է, որ լույսը պատկերվող առարկայի վրա ընկնի՝

1. Վերնից և աջից
2. Վերնից և ձախից
3. Ներքնից և աջից
4. Ներքնից և ձախից

39.Գլանի և կոնի փովածքներ կառուցելիս ի՞նչ բանաձևով են որոշում շրջանագծի երկարությունը.

1. $A = \pi dr$
2. $A = 2 \pi dr$
3. $A = \pi d$
4. $A = 2 \pi d$

40.Ո՞ր պրոյեկցիոն առանցքն է առաջանում պրոֆիլային և հորիզոնական հարթությունների հատումից.

1. OZ առանցքը
2. OX առանցքը
3. OY առանցքը
4. XY առանցքը

41.Պրոյեկցիոն առանցքների Y առանցքը՝

1. Երկարության ուղղությունն է
2. Լայնության ուղղությունն է
3. Բարձրության ուղղությունն է
4. Թեքության ուղղությունն է

42.Փայտե նախապատրաստվածքի վրայի անցքը կամ փոսիկը, որը չափերով և ձևով համապատասխանում է բութակին կոչվում է՝

1. Բլթանցք
2. Բնիկ
3. Փորվածք
4. Թողնվածք

43. Ուղղանկյուն տեսքով ակոսների, բլթանցքների, բնիկների հարմարաբերումը կատարվում է՝

1. Թորձադուրով
2. Իզմիրով
3. Էլեկտրաթործիչներով
4. Դանակով

44. Ինչպե՞ս են չափում անցքի տրամագիծը ձողակարկինի օգնությամբ.

1. Ներքին շուրթերով
2. Վերին շուրթերով
3. Խորաչափով
4. Քանոնով

45. Ո՞ր կողմ են ուղղված խարտոցի աստամները.

1. Դեպի առաջ
2. Դեպի հետ
3. Տարբեր կողմեր
4. Դեպի ներքև

46. Խարտոցման ո՞ր ձևի ժամանակ է մեկ անցում կատարելիս մետաղի ավելի հաստ շերտ հեռացվում:

1. Երկայնական
2. Լայնական
3. Շրջանաձև
4. Թեք շտրիխներով

47. Ինչի՞ համար են նախատեսված մեքենաների ղեկավարման մեխանիզմները.

1. Դրա միջոցով իրականացվում է տարբեր հանգույցների տեղաշարժը
2. Դրա միջոցով իրականացվում է մեքենաների գործարկումը և անջատումը
3. Դրա միջոցով կարգավորվում են մեքենայի պարամետրերը
4. Դրա միջոցով ստուգում են բազային մակերևույթի փոխդասավորվածության ճշտությունը

48. Փայտամշակման խառատային հաստոցի ո՞ր մասում է ամրացվում եռաժանին.

1. Հետևի թամբի վրա
2. Իլի վրա
3. Հենոցի վրա
4. Շարժիչի վրա

49. Մարմնի մեջ մեկ այլ ավելի կարծր մարմնի ներթափանցմանը դիմադրելու հատկությունը կոչվում է՝

1. Մետաղի ամրություն
2. Մետաղի առաձգականություն
3. Մետաղի կարծրություն
4. Մետաղի պլաստիկություն

50. Ժամանակի միավորի ընթացքում հաղորդիչով անցնող էլեկտրական լիցքը կոչվում է՝

1. Հոսանքի լարում
2. Հոսանքի ուժ
3. Հոսանքի դիմադրություն
4. Հոսանքի ճնշում

51. Մեծությունը, որը հանդիսանում է էլեկտրական հոսանքի առաջացման պատճառ կոչվում է՝

1. Էլեկտրական լարում
2. Հոսանքի ուժ
3. Հոսանքի դիմադրություն
4. Հոսանքի ճնշում

52. Կերակրի մեջ ինչպե՞ս կարող է փոխվել վիտամինների քանակությունը կախված բանջարեղենի կտրատման չափերից.

1. Վիտամինների քանակը կախված չէ բանջարեղենի կտրատման չափից
2. Որքան խոշոր է կտրատված բանջարեղենը այնքան քիչ է վիտամինի կորուստը
3. Որքան խոշոր է կտրատված բանջարեղենը այնքան շատ է վիտամինի կորուստը
4. Որքան մանր է կտրատված բանջարեղենը այնքան քիչ է վիտամինի կորուստը

53. Ըստ հին փիլիսոփաների ո՞ր հեղուկն են անվանել կենսական հյուսօ.

1. Արյուն
2. Կաթ
3. Ջուր
4. Գինի

54. Թելատու ո՞ր բույսի պտուղներում են առաջանում բուսական մանրաթելերը.

1. Բամբակենի
2. Ագավա
3. Մետաքսածառ
4. Կանեփ

55. Ուղիղ կիսաշրջագգեստի սեղմոնի ճիշտ դիրքը գծագրի վրա որոշելու համար պետք է՝

1. Կոնքի կիսաշրջագիծը բաժանել երկու մասի
2. Գոտկատեղի կիսաշրջագիծը բաժանել չորս մասի
3. Կոնքի շրջագիծը բաժանել չորս մասի
4. Գոտկատեղի շրջագիծը բաժանել չորս մասի

56. Տղամարդկանց հագուստի չափափորձման ժամանակ դերձակը շտկումները հագուստի ո՞ր հատվածում է կատարում.

1. Աջ կիսամասի վրա
2. Ձախ կիսամասի վրա
3. Կենտրոնական հատվածում
4. Հագուստի հակառակ կողմում

57. Ո՞ր դեպքում է թակալակարի հանգույցը առաջանում վերևում.

1. Թույլ է ձգված վերնի թելը կամ ուժեղ է ձգված ներքինինը
2. Ուժեղ է ձգված վերնի թելը կամ թույլ է ձգված ներքինինը
3. Ուժեղ է ձգված վերնի և ներքինի թելերը
4. Թույլ է ձգված վերնի և ներքինի թելերը

58. Ինչպե՞ս է կոչվում դետալի եզրի սուր կողի կտրվածքը, որը արվում է հարվածների հետևանքով չորսվակի սուր կողերը ջարդվելուց պաշտպանելու համար.

1. Շրջափորեք
2. Կլորացում
3. Մատնեք
4. Երեսակ

59. Ինչպե՞ս են ստուգում սդոցի ատամների չափոաստման ճշտությունը.

1. Քանոնի օգնությամբ
2. Չափոաստիչի օգնությամբ
3. Ձողակարկինի օգնությամբ
4. Ձևանմուշի օգնությամբ

60. Ստորև թվարկվածներից ո՞ր շարքում են նշված միայն արմատապտղավորները.

1. Ճակնդեղ, նեխուրի արմատ, գետնախնձոր
2. Գազար, կարտոֆիլ, սխտոր
3. Ծովաբողկի արմատներ, գազար, բողկ
4. Ճակնդեղ, բաթաթ, գլուխ սոխ

61. Ստորև թվարկվածներից ո՞ր շարքում են նշված միայն հացազգիները.

1. Ցորեն, բակլա, կորեկ, բրինձ
2. Ցորեն, հաճար, բրինձ, ոսպ
3. Ցորեն, ոլոռ, գարի, հաճար
4. Վարսակ, կորեկ, բրինձ, աշորա

62. Գործարանային պայմաններում ինչքա՞ն են տաքացնում կաթը պաստերացնելու համար.

1. Մինչև 76°C
2. 120°C -ից բարձր
3. 80°C....90°C
4. 100°C....110°C

63. Որպես պաստերացման արդյունք կաթը՝

1. Կորցնում է վիտամինները
2. Չտվում է
3. Վարակագերծվում է
4. Թթվեցվում է

64. Մաքրամե տեխնիկայով աշխատելուց առաջ վուշե և բամբակե թելերը անհրաժեշտ է եռացնել, որ դրանք դառնան՝

1. Մանրէազերծ
2. Ավելի ամուր
3. Ավելի փափուկ և ճկուն
4. Ավելի գեղեցիկ

65.Նշվածներից ո՞րը մաքրամե տեխնիկայի հանգույց չէ.

1. Ռեպսաձև հանգույց
2. Ժոզեֆինա հանգույց
3. Մեպաձև հանգույց
4. Չինական հանգույց

66.Ինչպե՞ս պետք է վերացնել թերությունը՝ երբ կարի մեքենայով աշխատելիս հանգույցները դասավորվում են կտորների միացման գծից ներքև.

1. Թուլացնել վերնի թելի ձգվածությունը
2. Թուլացնել ներքևի թելի ձգվածությունը
3. Սկզբում թուլացնել վերնի թելի, ապա ներքևի թելի ձգվածությունը
4. Սկզբում ավելացնել վերնի թելի, ապա ներքևի թելի ձգվածությունը

67.Ինչպիսի՞ ասեղներ են օգտագործում կարի մեքենայով տրիկոտաժե հագուստեղեն կարելիս.

1. Կլորացված սայրով
2. Սուր սայրով
3. Բարակ ասեղներ
4. Հաստ ասեղներ

68.Մեխանիզմում շարժումը փոխանցող օղակը կոչվում է՝

1. Գլխավոր
2. Կարևոր
3. Տանող
4. Տարվող

69.Հորիզոնական ֆրեզերային հաստոցի ո՞ր մասում է գտնվում զինգը.

1. Ամրացված է բարձակի վրա
2. Ամրացված է հիմնատակի վրա
3. Ամրացված է լայնական մատուցման դարձանիվի ծայրին
4. Ամրացված է կնճիթի ծայրին

70. Կարի մեքենայի մասրայի թասակի գսպանակը կարգավորող պտուտակի պտտման միջոցով կարելի է կարգավորել՝

1. Վերևի թելի ձգվածությունը
2. Ներքևի թելի ձգվածությունը
3. Կութերի երկարությունը
4. Ասեղի ներթափանցման խորությունը